

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԻՇԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԹԱԹՈՒԼԻ

**ԲԱՌԱՊԱՇԱՐԱՅԻՆ ՓՈԽՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄՆ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆԳԼԵՐԵՆ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (անգլերեն
լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Սուսաննա Պարզևի Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր
Լուսինե Հրանտի Ֆլյան

մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Տաթև Գուրգենի Գևորգյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. ապրիլի 4-ին, ժամը՝ 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում: Սեղմագիրն առաքված է 2024 թ. մարտի 1-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝



Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից հարավփոփոխ աշխարհում օտար լեզուների իմացությունն անհրաժեշտություն է առաջնային նախապայման է բազմալեզու և բազմամշակույթ անհատ կերտելու գործընթացում: Սովորել օտար լեզու՝ նշանակում է ուսումնասիրել և յուրացնել ոչ միայն լեզուն, այլև տվյալ լեզուն ներկայացնող մարդկանց մշակույթը, ավանդույթները, պատմությունը, հասարակական բարքերը, վարքագծի կանոնները և այլն: Այս ամենի համատեքստում առաջնային է դառնում օտար լեզվի բառապաշարի յուրացումը, որը, պայմանավորված սովորողների մայրենի, նախկինում յուրացրած այլ լեզուների կամ հենց թիրախային լեզվի առանձնահատկություններով, կարող է փոխներթափանցման ենթարկվել:

Փոխներթափանցող բառերի մի մեծ պաշար նկատելի է Հայաստանի Հանրապետության (այսուհետև՝ ՀՀ) հիմնական դպրոցներում կիրառվող մի շարք դասագրքերում, որոնցում, սակայն, վերոհիշյալ միավորները որևէ կերպ չեն առանձնացվում, դրանց ուսուցման գործընթացում առանձին մեթոդներ կամ մոտեցումներ չեն կիրառվում, ինչպես նաև չկան դրանց հաղթահարմանը նպաստող մշակված առաջադրանքներ, ինչի հետևանքով սովորողները թույլ են տալիս սխալներ՝ ձևավորելով որոշակի խոսափողական վարքագիծ, երբ հարցը վերաբերում է հաղորդակցության գործընթացում փոխներթափանցող բառերի գործածմանը:

Փոխներթափանցող բառապաշարային միավորներին, դրանց դասակարգմանը և փոխներթափանցման հետևանքով սխալների առաջացման հիմնախնդիրներին մասնագիտական գրականության մեջ անդրադարձել են մեծ թվով մանկավարժ-մեթոդիստներ (Ս. Ասատրյան, Ա. Աբրահամյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Ղազարյան, Ս. Վ. Тимачев, С. Е. Кузьмина, Б. М. Чойбонова, Ю. С. Блажевич, Л. А. Зайналова и Р. М. Расулова, Л. А. Ульяницкая, М. Г. Маркова, Р. С. Смольников и Л. В. Павлова, S. P. Corder, J. C. Richards, H. Y. Touchie, E. Kellerman, T. Odlin, A. Hashim, H. D. Brown, S. M. Gass & L. Silenker, A. Sirbu, U. Weinreich): Այսուհանդերձ, ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են բառապաշարային նման միավորների հաղթահարման արդյունավետ մեթոդական կադապարներ երևան հանելուն, ինչպես նաև նկարագրող կոնկրետ գիտափորձերը՝ իրականացված որոշակի փոխներթափանցող բառապաշարային միավորներով, արտասահմանյան մեթոդական գրականության մեջ խիստ սակավ են, իսկ հայրենական մեթոդական գրականության մեջ հայոց լեզվի տիպաբանական և հայալեզու աշակերտների լեզվամշակութային առանձնահատկությունները հաշվի առնող առհասարակ գոյություն չունեն:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է անգլերենի ուսուցման գործընթացում փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների բացահայտմանը, կանխարգելմանն ու հաղթահարմանը նպատակաուղղված մեթոդական համակարգի մշակման և կիրառման անհրաժեշտությամբ, որը կնպաստի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացմանը, սովորողների լեզվահաղորդակցական կարողությունների զարգացմանը: Զուգահեռաբար այն կխթանի սովորողների քննական, ստեղծագործական մտածողությունը, համակարգելու կարողությունը, միջմշակութայնությունը, ծագած խնդիրներին լուծումներ գտնելու և հանդիպող դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու կարողությունները:

Ուսուցման ժամանակակից մեթոդների և հաղորդակցական վարժությունների միջոցով փոխներթափանցող բառապաշարային միավորներ ուսուցանելն անհրաժեշտություն է՝ պայմանավորված օտար լեզվի դասավանդման առջև ծառայած մարտահրավերներին դիմակայելու, անձնակենտրոն ուսուցում ապահովելու և բառապաշարի յուրացման նկատմամբ սովորողների կարծրացած պատկերացումները վերափոխելու միտումով:

Նշված մեթոդների համատեղ կիրառումը թույլ է տալիս աշակերտներին զարգացնել ոչ միայն լեզվական, այլև կենսական կարևորության մի շարք այլ հմտություններ, ինչպիսիք են սոցիալ-մշակութային, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու, խմբային ու համագործակցային աշխատանք կատարելու, քննական և ստեղծագործական միտքը զարգացնելու, սեփական ունակությունները գիտակցելու և դրանք հնարավորինս արդյունավետ օգտագործելու, աշխատանքը համաչափ բաշխելու, այն ժամանակին և ներկայացված պահանջներին համապատասխան կատարելու կարողությունները, որոնք անհրաժեշտ են բազմալեզու և բազմամշակույթ հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելու համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մշակել, ուսուցման գործընթացում ներդնել և գիտականորեն հիմնավորել փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների բացահայտման, կանխարգելման և հաղթահարման մեթոդական համակարգ, որը կնպաստի փոխներթափանցող բառապաշարային միավորների արդյունք հանդիսացող լեզվական սխալների նվազմանը և բառապաշարի արդյունավետ յուրացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Եթե իրականացվի լեզուների համեմատական վերլուծություն՝ ուսումնասիրելով օտար լեզվի դասավանդման նպատակով ՀՀ հիմնական

դպրոցներում կիրառվող դասագրքերը, ինքնադիտարկումներ և դասախոսներ անցկացնելով կատարվի սովորողների սխալների վերլուծություն, քննության ենթարկվեն և դասակարգվեն ստացված արդյունքները, բացահայտվեն կատարվող սխալների դրդապատճառները՝ նկատի առնելով ուսուցանվող օտար լեզվի և սովորողների մայրենի լեզվի առանձնահատկությունները, փորձարարական ուսուցման ընթացքում կիրառվեն նման սխալները կանխարգելելու և հաղթահարելու նպատակով ուսուցման այլընտրանքային-հաղորդակցական ռազմավարություններ, ապա հնարավոր կլինի մշակել փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների հաղթահարման արդյունավետ մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսումնասիրել և վերլուծել մասնագիտական մեթոդական գրականությունը:

2. Քննության առնել «լեզվական փոխներթափանցում» և «բառապաշարային փոխներթափանցում» հասկացությունները:

3. ՀՀ հիմնական դպրոցի օտար լեզվի դասագրքերից առանձնացնել փոխներթափանցող բառապաշարային միավորները՝ կիրառելով համեմատական ուսումնասիրություն և սխալների վերլուծություն:

4. Մշակել մեթոդական համակարգ, որը ներառում է ուսուցման ավանդական (հաղորդակցական վարժություններ) և նորարական (պատաս- շնորհանդես և բառապաշարային օրագիր նախագծային աշխատանք) մեթոդները և մոտեցումները:

5. Փորձարարական ուսուցման միջոցով հիմնավորել կիրառված մեթոդական համակարգի արդյունավետությունը և նպատակահարմարությունը փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների կանխարգելման և հաղթահարման գործընթացում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

Օտար լեզվի ուսուցման գործընթացում փոխներթափանցող բառապաշարային միավորներն են և այդ միավորների լեզվական դժվարությունների բացահայտման, կանխարգելման և հաղթահարման գործընթացը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱԼ

Փոխներթափանցող բառապաշարային միավորների արդյունք հանդիսացող սխալների կանխարգելման և հաղթահարման մեթոդական համակարգն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ հիմքն են կազմել հետևյալ տեսությունները.

- լեզուների համեմատական վերլուծության տեսությունը (Ի. Կ. Կարապետյան և Մ. Զ. Բարախանյան, В. Д. Аракин, В. С. Вященко, С. С. Ценгер, Н. Д. Юланова, Н. D. Brown, R. Lado, Z. Havlaskova, M. Thorovský, A. L. Döring և այլք),
- սխալների վերլուծության տեսությունը (J. A. Upshur, S. M. Gass & L. Silenker, R. Ellis, B. M. Kroll & J. C. Schafer, M. A. Al-khresheh, A. A. Khansir, J. C. Richards, H. C. Dulay & M. K. Burt և այլք),
- հաղորդակցական ուսուցման մեթոդը (Ս. Ասատրյան, J. Sheils, R. I. U. Patmi & S. Sabaruddin, O. Rumbouw, L. Yuliawati & A. Aprillia և այլք),
- ուսուցման փոխներգործուն մեթոդները, մասնավորապես՝ նախագծային ուսուցման մեթոդը (Н. Н. Новикова, Н. М. Курченко, И. В. Савина и Т. Г. Крапотина, A. Argynbayev & Z. Akhmetzhanova և այլք),
- աշակերտների հաղորդակցական, մտավոր, քննական, ստեղծագործական, հետազոտական, համագործակցային կարողությունների և հմտությունների զարգացման մոտեցումները (H. D. Alsalihi, B. Kondal & V. D. Prasad, C. Prichard & D. Ferreira, J. E. Miller, S. Kaimal & D. Thappa և այլք):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

Տեսական մեթոդներ.

- հետազոտության թեմային վերաբերող մանկավարժամեթոդական գրականության վերլուծություն,
- հետազոտության իրականացման համար առանցքային հասկացությունների սահմանում և հիմնավորում,
- ՀՀ հիմնական դպրոցի անգլերեն առարկայական և A1, A2, B1, B2 մակարդակների ժամանակակից դասագրքերի, հին և նոր առարկայական չափորոշիչների ուսումնասիրություն՝ բացահայտելու բառանյութում ընդգրկված փոխներթափանցող միավորները:

Էմպիրիկ մեթոդներ.

- ներքին (ինքնա-) և արտաքին դիտարկումներ, սովորողների թեստավորում,
- հարցազրույցների և քննարկումների անցկացում,
- գիտափորձ՝ բաղկացած աշակերտների հայտորոշիչ թեստավորման, նախափորձարարական և հետփորձարարական փուլերից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

1. Կատարվել է ՀՀ հիմնական դպրոցի անգլերեն առարկայական դասագրքերի, ինչպես նաև A1, A2, B1 և B2 մակարդակների ժամանակակից դասագրքերի համեմատական վերլուծություն՝ դրանցում առկա փոխներթափանցող բառապաշարային միավորները վերհանելու նպատակով:
2. Մշակվել և ներդրվել է փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունների կանխարգելման և

հաղթահարման մեթոդական համակարգ, որը ներառում է նախագծային աշխատանքներ (բառապաշարային օրագիր, պաստառ-շնորհանդես) և հաղորդակցական տարաբնույթ առաջադրանքներ:

3. Հիմնավորվել է գիտափորձի շրջանակներում մեր կողմից մշակված և ներդրված մեթոդական համակարգի արդյունավետությունը և փոխներթափանցող բառապաշարային միավորներն ուսուցման գործընթացում կիրառելու նպատակահարմարությունը:

4. Գիտափորձի շրջանակներում մշակված նախագծային առաջադրանքների և հաղորդակցական վարժությունների համակարգը կարող է կիրառվել հիմնական դպրոցում աշակերտների բառապաշարային փոխներթափանցման արդյունքում լեզվական դժվարությունների հաղթահարումն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Սույն աշխատանքի շրջանակներում հիմնավորվել են օտար լեզուների յուրացման գործընթացում լեզվական փոխներթափանցումը կանխարգելելուն միտված ուղիները/մոտեցումները՝ սովորողների հաղորդակցական լեզվական կարողությունների զարգացման տեսանկյունից: Բացահայտված են մասնավորապես ուսուցման գործընթացում բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման մեթոդները/սկզբունքները, նոր մեթոդական դիրքերից ապացուցված է մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայրենական մեթոդական գրականության մեջ սույն առենախոսությունն իր տեսակով եզակի հետազոտական աշխատանք է, որը ոչ միայն ուսումնասիրում է փոխներթափանցող բառապաշարային միավորների տեսական հայեցակետերը, այլև ներկայացնում է դրանց հաղթահարմանը նպատակաուղղված մեթոդական համակարգը: Առաջարկված են փոխներթափանցող բառապաշարային միավորների արդյունավետ յուրացման համար գիտափորձով հիմնավորված հատուկ հաղորդակցական առաջադրանքներ և նախագծային ուսուցման տարբերակներ: Առենախոսության նյութերը կարող են կիրառվել ՀՀ հիմնական դպրոցներում, օտար լեզուների դասավանդման կենտրոններում և այլ կրթական հաստատություններում որպես լրացուցիչ առաջադրանքներ և նախագծային աշխատանքներ կատարելու տարբերակներ: Մշակված նյութերը մեծապես կարող են կիրառել նաև լեզվի տեսության և մեթոդաբանության հարցերով զբաղվող մասնագետները՝ առարկայական ծրագրեր և դասագրքեր կազմելիս:

Հետազոտության նյութերը կիրառվել են Երևանի Մ. Մաշտոցի անվան ուսումնական համալիրի 5-8-րդ դասարաններում՝ հետազոտության մշակվածությունը և ճշգրտությունն ապահովելու նպատակով:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՎԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ապահովված են կատարված աշխատանքի ծավալով, հետազոտության մասնակիցների բավարար թվով, հետազոտության խնդիրների և եզրահանգումների համապատասխանությամբ, դրա անցկացման համար կիրառված մեթոդական և մեթոդաբանական գործիքակազմով, գիտափորձի արդյունքում ձեռք բերված տվյալների մանրագնին վիճակագրական վերլուծությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է հետևյալ փուլերով.

Առաջին փուլում (2018-2020թթ.) ուսումնասիրվել է հետազոտության թեմային վերաբերող գիտամանկավարժական, մեթոդական գրականությունը, առանձնացվել են հետազոտության հիմնական մեթոդական հիմքն ապահովող աշխատանքները, հստակեցվել են հետազոտության իրականացման փուլերը, բովանդակությունը, հիմնական հասկացությունները և եզրույթները, նպատակն ու խնդիրները, ձևավորվել է հետազոտության առարկան, առաջադրվել է նախնական վարկածը:

Երկրորդ փուլում (2020-2021թթ.) կատարվել է անգլերենի ուսուցման նպատակով կիրառվող դասագրքերի համեմատական վերլուծություն, հին և նոր առարկայական չափորոշիչների մանրակրկիտ քննություն՝ յուրաքանչյուր դասարանում սովորողների յուրացվելիք բառապաշարի ծավալային ու բովանդակային առանձնահատկությունների վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Հետազոտության արդիականությունը հիմնավորելու նպատակով անցկացվել է աշակերտների հայտորոշիչ թեստավորում՝ փոխներթափանցող բառապաշարային միավորների իմացությունը ստուգելու նպատակով:

Երրորդ փուլում (2021-2023թթ.) հետազոտության վարկածը հաստատելու նպատակով մշակվել և ներդրվել է մեթոդական համակարգ: Որոշվել են հետազոտության անցկացման վայրը, մասնակիցների թիվը, տևողությունը և մեթոդական գործիքակազմը: Ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբերը, իրականացվել է բուն գիտափորձը:

Չորրորդ փուլում (2023թ., փետրվար-ապրիլ) գործնականում կիրառվել է բառապաշարային փոխներթափանցման հաղթահարմանը նպաստող մեթոդական համակարգը, վերլուծվել և հիմնավորվել է կիրառված մեթոդի արդյունավետության աստիճանը, ամփոփվել են արդյունքները:

1. Ավանդական մեթոդներով փոխներթափանցող բառապաշարային միավորներ ուսուցանելու պարագայում հիմնական դպրոցում սովորող աշակերտների մեծամասնությունը նման միավորները չի յուրացնում, ինչը հանգեցնում է մի շարք սխալների կատարման՝ խոչընդոտելով հաղորդակցական սահուն գործընթացը:

2. Փոխներթափանցող բառապաշարային միավորները լեզուների համեմատական վերլուծության և սխալների վերլուծության միջոցով պետք է առանձնացվեն դասագրքերում ընդգրկված ընդհանուր բառապաշարից և ներկայացվեն սովորողներին՝ դրանց յուրացմանը նպատակաուղղված մեթոդական համակարգի մշակման և ներդրման միջոցով:

3. Մեր կողմից մշակված, փորձարկված և ուսումնական գործընթացում ներդրված մեթոդական համակարգի շնորհիվ փոխներթափանցող բառապաշարային միավորների ուսուցումը կդառնա առավել արդյունավետ, դյուրին ու տրամաբանված: Զուգահեռաբար կգարգանան աշակերտների քննական միտքը, հետազոտական ու համագործակցային աշխատանք կատարելու հմտությունները, միջառարկայական ու միջմշակութային կապեր հաստատելու ունակությունները, ծագած խնդիրներին լուծումներ գտնելու և պատկերավոր ու հիշարժան եղանակով բառանյութը յուրացնելու կարողությունները:

ՀՆԱՏԱԳՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

«Բառապաշարային փոխներթափանցման հարթահարումն աշակերտների անգլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում» խորագիրը կրող մեր հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է հրապարակված 6 գիտական հոդվածներում (*Կրե՛ս անվանացանկն արե՛նսխոսության սեղմագրի վերջում*), Վ. Բրյուսովի *անվան պեդագոգական համալսարանի կազմակերպած «Լեզու, մշակույթ, կրթություն»* խորագիրը կրող *գիտաժողովում (2021)*, Վ. Բրյուսովի *անվան պեդագոգական համալսարանի Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի քննարկումներում*, որպեղ և *աշխատանքը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:*

Հետազոտության արդյունքները ներդրվել են Երևանի Վ. Վարդևանյանի անվան թիվ 173, Վ. Տերյանի անվան թիվ 60, Է. Թելմանի անվան թիվ 13 հիմնական դպրոցներում, ինչպես նաև Մ. Մաշտոցի անվան ուսումնական համալիրում: Ընդհանուր առմամբ հայտորոշիչ թեստավորմանը մասնակցել է 263, նախափորձարական թեստավորմանը՝ 120, հետփորձարարական թեստավորմանը՝ 116 աշակերտ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 121 էջ, որը ներառում է նաև տրամագրեր, աղյուսակներ, սանդղակներ, աշակերտների պատրաստած նախագծերի որոշ հատվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևավորվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, հետազոտության վարկածը, մեթոդաբանական հիմքը, խնդիրները, սահմանվել են գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները, պարզաբանվել է հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Լեզվական փոխներթափանցումը, դրա տեսակները և հաղթահարման տեսական հիմունքներն անգլերենի, որպես օտար լեզվի, ուսուցման գործընթացում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Լեզվական փոխներթափանցումը և դրա դասակարգման տարբերակները»** ենթագլխում քննության է առնվում *լեզվական փոխներթափանցումը* և դրա դերն օտար լեզվի ուսուցման գործընթացում: Սահմանվում է *«լեզվական փոխներթափանցում»* եզրույթը, դիտարկվում են դրա դասակարգման հիմնական տարբերակները՝ հաշվի առնելով առաջացման բնույթը, իրականացման ուղղությունը, դրսևորման տեսակը, ինչպես նաև խոսքի մասերի պատկանելիությունը:

Երկրորդ՝ **«Օտար լեզուների յուրացման գործընթացում լեզվական փոխներթափանցումը կանխարգելելու հիմնական մոտեցումները»** ենթագլխում քննության են առնվում լեզվական փոխներթափանցման առաջացման պատճառները: Դիտարկվում են փոխներթափանցումը կանխարգելելու և հաղթահարելու հիմնական երկու մոտեցումների՝ լեզուների համադրական և սխալների վերլուծության տեսությունների պատմական զարգացման առանձնահատկությունները:

Հստակորեն շեշտադրվում է, որ ներկայացված մոտեցումները կրում են փոխկապակցված ու փոխլրացնող բնույթ, և միայն դրանք համադրելով է հնարավոր հասնել ուսուցման գործընթացում առավելագույն արդյունքի:

Երրորդ՝ **«Բառապաշարային փոխներթափանցումը և դրա տեսակները»** ենթագլխում սահմանվում է *«փոխներթափանցող բառապաշար»* հասկացությունը, վերլուծվում և դասակարգվում են դրա տեսակները՝ ըստ լեզվական միավորների բնորոշ

առանձնահատկությունների, ըստ խոսքի մասերի պատկանելիության, ինչպես նաև ըստ առաջացման բնույթի և ուղղության:

Նշվում է, որ օտար լեզվի դասավանդման մեթոդիկայում թերևս ամենանպատակալիինը լեզվական փոխներթափանցումն ըստ առաջացման բնույթի տարանջատելն է: Նման դասակարգումը թույլ է տալիս հատկանշել և վերլուծել սովորողների կողմից թույլ տրված բոլոր սխալները, հասկանալ դրանց պատճառները, հաշվել միջլեզվական (օրինակները տե՛ս Աղյուսակ 1-ում) և ներլեզվական (օրինակները տե՛ս Աղյուսակ 2-ում) բառապաշարային փոխներթափանցման սխալների քանակը, ստանալ ճշգրիտ տվյալներ, որոնց վերլուծությունը թույլ է տալիս պարզել, թե խոսքի մասերից որոնցում է լեզվական փոխներթափանցումն առավել հաճախ հանդիպում:

Աղյուսակ 1

Միջլեզվական բառապաշարային փոխներթափանցում

Հնչյունաբանական կառուցվածքի նմանությամբ պայմանավորված փոխներթափանցում		
<i>Physician</i>	Врач, ոչ թե физик	Բժիշկ, թերապևտ, ոչ թե ֆիզիկոս
<i>Magazine</i>	Журнал, ոչ թե магазин	Ամսագիր, ոչ թե խանութ
<i>Dutch</i>	Голландский, ոչ թե датский	Հոլանդական, ոչ թե դանիական
Ձևաբանական կառուցվածքի նմանությամբ պայմանավորված փոխներթափանցում		
<i>Composer, ոչ թե compositor</i>	Композитор	Կոմպոզիտոր
<i>Architect, ոչ թե architector</i>	Архитектор	Ճարտարապետ
<i>Examiner, ոչ թե examiner</i>	Экзаменатор	Քննող
Արժույթայնության անհամապատասխանությամբ պայմանավորված փոխներթափանցում		
Հայերեն տարբերակ	Անգլերեն ճիշտ տարբերակ	Հայերենի փոխներթափանցման հետևանք
<i>Աշխարհը կլոր է</i>	It's a small world	It's a round world
<i>Դափարկ հայացք</i>	Blank look	Empty look
<i>Թարմ լուրեր</i>	Latest news	Fresh news
<i>Ցանկալի փեսացու</i>	Eligible bachelor	Desired bachelor

Իդիոմատիկ/դարձվածային արտահայտությունների փոխներթափանցում		
<i>At the end of the day</i>	Ի վերջո	Օրվա ավարտին
<i>In the middle of nowhere</i>	Աշխարհի ծայրին	Ոչնչի կենտրոնում
<i>Every now and then</i>	Ժամանակ առ ժամանակ	Հիմա և հետո


Աղյուսակ 2

Ներլեզվական բառապաշարային փոխներթափանցում

Փոխներթափանցման տեսակը	Օրինակը
Հարանուններ	sensitive – sensible, accept - expect- except
Համանուններ	flower-flour, weak- week (նույնահունչ/համահունչ)
Հոմանիշներ կամ մոտ իմաստներ արտահայտող բառեր	look like - be like - look alike, nephew - niece – cousin
Գոյականակերտ վերջածանցների -r, -er, -or, -ist օգտագործման թյուր պատկերացում	collect-collector, govern-governor

Ատենախոսության երկրորդ՝ «Հաղորդակցական անզերենի ուսուցման գործընթացում բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման մեթոդական համակարգը» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ «Աշակերտների հայտորոշիչ թեստավորում, փոխներթափանցող բառապաշարային միավորների իմացության ստուգում» ենթագլխում ներկայացվում է լեզուների համադրական և սխալների վերլուծության տեսությունների օգտագործման միջոցով ՀՀ հանրակրթական դպրոցի 5-ից 8-րդ դասարանների անզերեն առարկայական և A1, A2, B1, B1+ ու B2 մակարդակի ժամանակակից դասագրքերից դուրս բերված փոխներթափանցող բառանյութը և դրանով կազմված հայտորոշիչ թեստերը: Ներկայացվում են ՀՀ տարածքում գործող երեք հանրակրթական դպրոցների 263 աշակերտների շրջանում անցկացրած հայտորոշիչ թեստավորման նախապատրաստական աշխատանքների կատարումը, իրականացման քայլերի հաջորդականությունը և արդյունքների վերլուծությունը, վերջինիս ամփոփ տարբերակը ցուցադրվում է Տրամագիր 1-ում:



Տրամագրից հետևում է, որ ծրագրով նախատեսված փոխներթափանցման ենթարկվող բառանյութի մոտավորապես 69-70 %-ն ուստարվա ավարտին սովորողների կողմից չի յուրացվում: Սա բավականին մեծ թիվ է, որը հաստատում է բարձրացված խնդրի լրջությունն ու հրատապությունը: Ուստի, հիմնավորվում է հետազոտության արդիականությունը և նախնական վարկածը, և նման սխալների հաղթահարմանն ուղղված հատուկ մեթոդական համակարգի մշակման և կիրառման անհրաժեշտությունը:

Երկրորդ՝ **«Փոխներթափանցող բառապաշարի ուսուցումը հաղորդակցական առաջադրանքների համատեքստում»** ենթազխում ներկայացվում է սույն ատենախոսության շրջանակում մշակված և կիրառված եռափուլ մեթոդական համակարգը՝ որը ներառում է սովորողների հաղորդակցական կարողությունները զարգացնող ընկալողական ու վերարտադրողական տարատեսակ վարժություններ և առաջադրանքներ:


Երրորդ՝ **«Նախագծային մեթոդի կիրառումը փոխներթափանցող բառերի ուսուցման գործընթացում»** ենթազխում քննության են առնվում նախագծային մեթոդի արդիականության և արդյունավետության գործոնները, ինչպես նաև դրանց կիրառման արդյունքում սովորողների ձեռք բերված կարողությունները և հմտությունները: Նկարագրվում են մեթոդի երկու տարբերակները՝ բառապաշարային օրագիրը և պաստառ-շնորհանդեսը, ընդգծվում է, որ մշակված և ներդրված վարժությունների համակարգն առավել արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է հաղորդակցական առաջադրանքները կատարելուց անմիջապես հետո ձեռք բերված

գիտելիքներն ամրապնդել *բառապաշարային օրագիր* կամ *պաստառ-շնորհանդես* նախագծային աշխատանքներով:


Չորրորդ՝ «**Մշակված մեթոդական համակարգի փորձարկում, արդյունքների վերլուծություն**» ենթագլխում նկարագրվում են փորձարարական ուսուցման երեք փուլերը՝ չորս տարիների ընթացքում մեր կողմից մշակված և ներդրված մեթոդական համակարգի կիրառմամբ: Համապատասխանաբար ներկայացվում են գիտափորձին մասնակից խմբերը, նախափորձարարական, փորձարարական և հետփորձարարական փուլերի իրականացման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի ավարտին ստացված արդյունքների քանակական և որակական վերլուծությունը:

Կատարվել է նախափորձարարական և հետփորձարարական փուլերին մասնակցած ստուգողական և փորձարարական խմբերի աշակերտների ընդհանուր արդյունքների վերլուծություն (Տրամագիր 2 և 3), որից պարզ է դառնում, որ գիտափորձի մեկնարկին ստուգողական և փորձարարական խմբերը ցուցադրում են փոխներթափանցող բառապաշարի իմացության գրեթե հավասարաչափ մակարդակ:

Տրամագիր 2



Տրամագիր 3



Գիտափորձի ավարտին նկատելի է դառնում փորձարարական խմբերի ընդգծված առավելությունը ստուգողական խմբերի հանդեպ, մասնավորապես՝ փորձարարական խմբերի տվյալների ընդհանուր վերլուծությունը սահմանում է 92 % արդյունք, որը հաստատում է մշակված և ներդրված մեթոդի արդյունավետությունն ու նպատակահարմարությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը և իրականացված հետազոտական աշխատանքը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Լեզվական փոխներթափանցումն օտար լեզվի ուսուցման անբաժան տարրերից է, որի ցանկացած դրսևորում խոչընդոտում է հաղորդակցական գործընթացի սահուն իրականացումը՝ որոշ դեպքերում հանգեցնելով հաղորդակցական գործընթացի լիակատար խաթարման:

2. Լեզվական փոխներթափանցման ամենահաճախ հանդիպող տարբերակներից է բառապաշարային փոխներթափանցումը, որը սովորողների մայրենի, նախկինում յուրացված կամ ուսուցանվող օտար լեզվի լեզվական միավորների և տարրերի սխալ փոխանցման հետևանքով կատարված սխալներն են:

3. Փոխներթափանցող լեզվական միավորների արդյունք հանդիսացող սխալների կանխարգելման և հաղթահարման երկու մոտեցումները՝ լեզուների համադրական և սխալների վերլուծությունները, անհրաժեշտ և ցանկալի է ուսուցման գործընթացում համադրել՝ պայմանավորված դրանց փոխկապակցված և միմյանց փոխլրացնող հանգամանքով:

4. Ուսումնասիրելով ՀՀ հիմնական դպրոցի օտար լեզվի և A1, A2, B1 և B2 մակարդակների ժամանակակից դասագրքերը՝ բացահայտվել է, որ նշված դասագրքերում փոխներթափանցող բառապաշարային միավորները բազմաթիվ են:

5. ՀՀ տարածքում գործող երեք տարբեր հանրակրթական դպրոցների աշակերտների շրջանում անցկացված հայտորոշիչ թեստավորումը ցույց է տվել, որ փոխներթափանցող բառապաշարային միավորների լեզվական դժվարությունները բացահայտելու, կանխարգելելու և հաղթահարելու նպատակով կիրառվող մեթոդները լիարժեք չեն ծառայում նպատակին, ինչի հետևանքով սովորողները թույլ են տալիս բազմաթիվ սխալներ:

6. Միայն դասագրքերում ներառված առաջադրանքներով փոխներթափանցող բառապաշարային միավորների հետևանք հանդիսացող սխալների կանխարգելումը և հաղթահարումը չեն կարող տալ ցանկալի արդյունք: Անհրաժեշտ է մշակել և ուսումնական գործընթացում ներդնել մեթոդական համակարգ, որը ներառում է հաղորդակցական տարատեսակ առաջադրանքներ և նախագծեր:

7. Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հաղորդակցական առաջադրանքները կատարելուց անմիջապես հետո ձեռք բերված գիտելիքներն ամրապնդել

բառապաշարային օրագիր կամ **պաստառ-շնորհանդես** նախագծային աշխատանքների միջոցով:

8. Փորձարարական ուսուցման ընթացքում և վերլուծության արդյունքում հիմնավորվեց մեր կողմից մշակված մեթոդական համակարգի արդյունավետությունը, որի հիմքում տարաբնույթ հաղորդակցական առաջադրանքներն ու նախագծերն են: Դրանք առաջնահերթ օգնում են փոխներթափանցող բառապաշարային միավորների արդյունք հանդիսացող լեզվական սխալները կանխարգելելուն և հաղթահարելուն՝ ժամանակակից մեթոդների և մոտեցումների միջոցով, ինչպես նաև խթանում են աշակերտների քննական, ստեղծագործական մտածողությունը, համագործակցային և խմբային աշխատանք կատարելը, միջմշակութայնությունը, ծագած խնդիրներին լուծումներ գտնելու և հանդիպող դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու կարողությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.

1. ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Թ. – Օտար լեզվով բանավոր հաղորդակցության ընթացքում թույլ տրվող սխալների տեսակները և դրանց մեթոդական դասակարգումը, Բանբեր, N 2 (43), Երևան 2018, ԲՊՀ, Լինգվա հրատ., էջ 244-252, ISSN 1829-3107

2. ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Թ. – Օտար լեզուների յուրացման գործընթացում լեզվական ինտերֆերենցիայի հաղթահարման հիմնական մոտեցումները, Օտար լեզուները բառձրագույն դպրոցում, Vol. 23, N 2 (27), Երևան 2019, էջ 135-143, ISSN 1829-2453

3. ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Թ. - «Լեզվական ինտերֆերենցիան» և դրա դասակարգման տարբերակներն անգլերեն հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացում, Օտար լեզուները բառձրագույն դպրոցում, Vol 24, N 2 (29), Երևան 2020, էջ 87-95, ISSN 1829-2453

4. ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Թ.- Բառապաշարային ինտերֆերենցիան և դրա տեսակներն անգլերենի դասավանդման մեթոդիկայում, Բանբեր, N 2(55), Երևան 2021, ԲՊՀ, Լինգվա հրատ., էջ 97-107, ISSN 1829-3107

5. ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Թ. – Պաստառ – շնորհանդես նախագծային ուսուցման մեթոդը՝ որպես բառապաշարային փոխներթափանցման հաղթահարման միջոց, Մանկավարժական միտք, Երևան 2023, N 1-2 (82-83), էջ 130-136, ISSN 1829-0213

6. ԲԻՇԱՐՅԱՆ Հ. Թ. - «Բառապաշարային օրագիր» նախագծային մեթոդի կիրառումը փոխներթափանցող բառերի ուսուցման գործընթացում, Բանբեր, N 2(63), Երևան 2023, ԲՊՀ, Լինգվա հրատ., էջ 172-182, ISSN 1829-3107

БИШАРЯН АСМИК ТАТУЛОВНА

**ПРЕОДОЛЕНИЕ ЛЕКСИЧЕСКОЙ ИНТЕРФЕРЕНЦИИ В ПРОЦЕССЕ
ФОРМИРОВАНИЯ КОММУНИКАТИВНЫХ НАВЫКОВ АНГЛИЙСКОГО
ЯЗЫКА У ШКОЛЬНИКОВ**

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 - «Методика преподавания и обучения» (английский язык).

Защита диссертации состоится 4-го апреля 2024г. в 12:00 на заседании специализированного совета 020 «Педагогика» КВОН РА по присуждению ученой степени при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В современном мире целью изучения и преподавания иностранных языков является формирование и развитие коммуникативных способностей учащихся, неотъемлемой частью которого является лексика, в частности интерферирующая лексика иностранного языка.

Сопоставительный анализ учебников английского языка, используемых в общеобразовательных школах Республики Армения, а также анализ совершаемых учениками ошибок показал, что количество интерферирующих единиц составляет большую часть; они никак не отделяются от основного словарного материала, не проводится целенаправленная и систематическая работа над ошибками обусловленных интерференцией языков и не используются отдельные методы для их предотвращения или же преодоления. В результате, учащиеся совершают многочисленные и устойчивые лексические ошибки и вырабатывают определенное уклончивое поведение, когда речь идет об использовании интерферирующих единиц в процессе общения.

Актуальность исследования обусловлена необходимостью разработки и применения методической системы, направленной на выявление, предотвращение и преодоление лексической интерференции в процессе изучения английского языка, что будет способствовать повышению эффективности процесса обучения и развитию коммуникативной способности учащихся.

Цель исследования: Разработать, внедрить в процесс обучения и научно обосновать методическую систему выявления, предупреждения и преодоления ошибок, вызванных лексической интерференцией. Данная система будет способствовать уменьшению количества ошибок, вызванных

лексической интерференцией, и эффективному усвоению таких языковых единиц.

Объект исследования: Это процесс выявления, предупреждения и преодоления лексической интерференции в процессе обучения иностранного языка.

Предмет исследования: Это методическая система, способствующая предотвращению и преодолению ошибок, вызванных лексической интерференцией.

Задачи исследования:

1. изучить и проанализировать профессиональную методическую литературу,
2. определить понятия «языковой интерференции» и «лексической интерференции»,
3. выделить интерферирующие лексические единицы путём применения сопоставительного анализа учебников английского языка и анализа ошибок учащихся общеобразовательной школы РА,
4. разработать методическую систему, включающую различные коммуникативные задания и проектные работы (стендовый доклад, словарный дневник),
5. обосновать эффективность и целесообразность методической системы, разработанной и применяемой путем экспериментального обучения.

Научная новизна исследования:

1. Проведен сопоставительный анализ учебников английского языка общеобразовательной школы РА и современных учебников уровня А1, А2, В1, В2, а также анализа ошибок учащихся с целью выделения интерферирующих лексических единиц.
2. Разработана и внедрена методическая система предотвращения/предупреждения и преодоления лексической интерференции, включающая проектные работы (стендовый доклад, словарный дневник) и коммуникативные задания.
3. Обоснована эффективность и целесообразность применения разработанной и внедренной нами методической системы в процессе обучения интерферирующих лексических единиц.
4. Проектные работы и коммуникативные задания, подготовленные в рамках научного эксперимента, могут быть использованы в общеобразовательной школе для эффективного преодоления ошибок, вызванных лексической интерференцией.

Теоретическая значимость исследования:

Обоснованы пути/подходы предотвращения языковой интерференции в процессе изучения иностранных языков с точки зрения развития коммуникативных компетенций учащихся.

Выявлены методы преодоления лексической интерференции в процессе обучения, доказана эффективность разработанной методической системы с новых методологических позиций.

Практическая значимость исследования:

В течении пяти лет была разработана и внедрена методическая система предупреждения и преодоления лексической интерференции, основу которой составляют коммуникативные задания и проектные работы (стендовый доклад и словарный дневник).

Материалы диссертации могут быть использованы в общеобразовательных школах РА, центрах обучения иностранным языкам и других учебных заведениях в качестве дополнительных заданий и проектных работ. Разработанные материалы и результаты исследования могут стать основой для создания новых учебных пособий, составления предметных программ, планирования уроков и учебников.

Структура и объем диссертации.

Диссертация, объемом 121 страниц, состоит из введения, двух глав, заключения, списка использованной литературы и приложений.

HASMIK T. BISHARYAN

OVERCOMING LEXICAL INTERFERENCE IN THE PROCESS OF DEVELOPING STUDENTS' ENGLISH COMMUNICATION SKILLS

This thesis submitted for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 – Teaching and Learning Methodology (English Language). The defense of the thesis will be held on April 4 2024 at 12:00, at the session of the Special Board 020 HESC (Higher Education and Science Committee) to award a scientific degree at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan Armenia, Address: 0010, 17 Tigran Mets Ave., Yerevan.

SUMMARY

The relevance of the research: In the modern world, the aim of studying and teaching foreign languages is to form and develop students' communicative abilities. Learning the vocabulary of a foreign language is integral to this process,

but mastering it is very much complicated by the native language interference with the target language.

A comparative analysis of English textbooks used in basic schools throughout the Republic of Armenia, as well as the analysis of the students' mistakes, show that the number of errors caused by lexical interference is immense; these lexical units are not separated from the basic vocabulary of the language, no purposeful and systematic work is carried out to overcome the errors caused by lexical interference, and no separate methods are used to prevent them. As a result, students make numerous and persistent errors caused by lexical interference and develop certain types of evasive behaviour when using interfering lexical units.

The relevance of the research is therefore determined by an evident need to develop and apply a methodological system aimed at identifying, preventing, and overcoming lexical interference in learning English to improve the efficiency of the learning process and develop students' communication skills.

The aim of the research:

To develop, implement and scientifically substantiate a methodological system within the learning process with the aim of identifying, preventing, and overcoming errors caused by lexical interference.

This system will contribute to reducing the errors caused by lexical interference and will make the process of learning interfering lexical units easier.

The object of the research:

The process of identifying, preventing, and overcoming lexical interference in learning a foreign language.

The subject of the research:

A methodological system that helps to prevent and overcome errors caused by lexical interference.

The objectives of the research:

1. study and analyze professional, methodological literature,
2. define the concepts of "language interference" and "lexical interference,"
3. identify the interfering lexical units by a comparative analysis of English textbooks and an error analysis of students learning English at RA basic school,
4. develop a methodological system that includes various communication tasks and project-based work (poster presentation, vocabulary journal),
5. substantiate the effectiveness and practicality of the developed and applied methodological system through experimental learning.

The scientific novelty of the research

1. A comparative analysis of basic school English textbooks of the Republic of Armenia and modern textbooks for A1, A2, B1, and B2 levels, as well as the analysis of students' errors, was carried out to identify interfering lexical units.

2. A methodological system for preventing and overcoming lexical interference that comprises project-based work (poster presentation, vocabulary diary) and communicative tasks was developed and implemented,

3. The effectiveness and expediency of the developed and implemented methodological system in teaching interfering lexical units is substantiated.

4. The projects and communication tasks prepared as a part of a scientific experiment can be used effectively in basic Schools of the RA to overcome errors caused by lexical interference.

The theoretical significance of the research:

Methods of preventing language interference in learning foreign languages, as formulated in this research are substantiated by the resulting improvement of students' communicative competence.

Methods/theories for overcoming the errors caused by lexical interference have been identified, and the effectiveness of the developed methodological system has been demonstrated.

The practical significance of the research:

Within five years, a methodological system for preventing and overcoming errors caused by lexical interference was developed and implemented, the basis of which are communicative tasks and project work (poster presentation and vocabulary journal).

The developed methodological system can be used as additional assignments and projects in Basic Schools of the Republic of Armenia, foreign language teaching centers, and other educational institutions. The developed materials and results of the research can become the basis for creating new teaching resources, preparing subject programs, lesson planning, and textbooks.

The structure and the volume of the research: The thesis (121 pages) consists of an introduction, two chapters, a conclusion, a list of references and appendices.

